ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 126 - Ա 17 հուլիսի 2017 թ.

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10 - Ի N 43 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման պահանջներն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 6-ի N 1190 տեղեկանքը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի մարտի 10-ի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին» N 43-Ա որոշմամբ հաստատված «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կանոնադրության 1.6.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.6. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ

ռուսերեն լրիվ «Мартунинский медицинский центр» закрытое акционерное общество

կրճատ՝ «Мартунинский медицинский центр» ЗАО

անգլերեն լրիվ՝ «Martuni Medical Center» close joint-stock company

կրճատ՝ «Martuni Medical Center» CJSC».

2) կանոնադրության 1.7րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.7. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական /փոստային/ հասցեն է՝

1401, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գետափնյա 2-րդ փողոց, թիվ 2/17:»:

2. Հաստատել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

3. «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վարդան Կարապետյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին, և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի մարտի 10-ի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին» N 43-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ընկերության վերստուգող հանձնաժողովի /վերստուգողի/ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին:».

2) որոշման տեքստից հանել 10-րդ կետը.

3) որոշման 11-րդ կետում «լիազորել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Աշոտ Մելքոնյանին,» բառերը փոխարինել «լիազորել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին,» բառերով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Կազմված է 2017թ.
Բաղկացած է թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ_____

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. ի
N որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

---------- ----------Կ. ԲՈԹՈՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 20.03.2009թ
գրանցման թիվ 222.120.01074
վկայական 03Ա 083842
ՀՎՀՀ 082 10623

20.03.2009թ. գրանցված
կանոնադրության թիվ
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

——— ——————————— 2017թ.

<<ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

Կանոնադրության 1.6-րդ և 1.7-րդ կետերը կարդալ

1.6. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ
ռուսերեն լրիվ «Мартунинский медицинский центр» закрытое акционерное общество
կրճատ՝ «Мартунинский медицинский центр» ЗАО
անգլերեն լրիվ՝ «Martuni Medical Center» close joint-stock company
կրճատ՝ «Martuni Medical Center» CJSC.

1.7. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական /փոստային/ հասցեն է՝
1401, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գետափնյա 2-րդ փողոց, թիվ 2/17:

Սույն փոփոխությունները հանդիսանում են «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 20.03.2009թ., գրանցման թիվ 222.120.01074, վկայական 03Ա 083842) բաղկացուցիչ մասը: